Երկարատև COVID-ի բեռի և բուժաշխատողների գործելակերպի հետազոտություն Հայաստանում (SCOPE-HCW) 2025-2026

Այս առցանց հետազոտությունն իրականացվելու է ՀՀ բոլոր մարզերում բուժհաստատությունների ինչպես առաջնային այնպես էլ երկրորդային օղակների բուժաշխատողների և այլ աշխատակիցների շրջանում՝ գնահատելու երկարատև COVID-ի բեռն ինչպես նաև բուժաշխատողների գիտելիքը, վերաբերմունքն ու փորձառությունը երկարատև COVID-ի վերաբերյալ: Հետազոտության նպատակային խումբ են հանդիսանում այն բուժաշխատողները, ովքեր աշխատել են COVID-19 համավարակի սկզբից:

Հետազոտությունը արդյունքները հնարավորություն են տալու բացահայտելու երկարատև COVID-ի իրական բեռը բուժաշխատողների շրջանում, նրանց գիտելիքների ու վերաբերմունքի առանձնահատկությունները, ինչպես նաև երկարատև COVID-ի հիվանդների վարման հիմնական խոչընդոտները: Այս տեղեկատվությունը հետագայում հիմք է հանդիսանալու նպատակային քաղաքականությունների մշակման, երկարատև COVID-ի վերաբերյալ բուժծառայությունների կազմակերպման բարելավման ինչպես նաև երկարատև COVID-ի վերաբերյալ բուժաշխատողների վերապատրաստման կարիքները պարզելու համար: